ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ ՐՁ/1169-Հ «18» 01 2016 թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
նախագահ տիկին Լ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ձեր՝ 11.01.2016թ. հ. 266-ի 4 գրության կապակցությամբ տեղեկացնում եմ հետևյալը.

Երևանի ենթակայության կառույցներին հանձնարարվել է հնարավորինս սեղմ ժամկետում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ներկայացնել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ծանուցումը, որն առայժմ չի ներկայացվել հետևյալ պատճառաբանությամբ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի ենթակայության կառույցները բազմազան են և բազմապրոֆիլ ուղղվածության՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրառման բնագավառում ծագած հարցերի ճշտման և պարզաբանման նպատակով պետական լիազոր մարմնի հետ ընթանում են խորհրդատվական բնույթի քննարկումներ, այդ թվում՝ կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակողների ստույգ շրջանակը ճշտելու նպատակով:

Նշված օրենքի միատեսակ կիրառությունն ու կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակող Երևանի ենթակայության կառույցների կողմից ծանուցման ներկայացումն ապահովելու նպատակով մեր խնդրանքով ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը կտրամադրի վերը նշված անձնական տվյալների մշակման մասին ծանուցման նմուշ-ուղեցույց :

Նշված աշխատանքներն ընթացքի մեջ են:

Իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյան

Կատ. Ա. Մուրադյան
514-174